

Հին հայերենի -իւն/եան հերթագայության ծագումնաբանական քննության նոր փորձ

Գրաբարյան -իւն/եան (ծիւն/ծեան և այլն) հերթագայության ծագումը հայերենի համեմատական քերականության ամենակնճռոտ հարցերից մեկն է: Լեզվաբանական-հայագիտական գրականության մեջ այդ հարցի վերաբերյալ առաջ են քաշվել երկու տարբեր տեսակետներ: Հ. Աճառյանը գտնում է, որ ինչպես տուն, շուն, այնպես էլ ծիւն, սիւն և այլն բառերի տան, շան, ծեան, սեան և այլն սեռական-տրականի ձևերը առաջացել են հիմն-հիման հոլովման տիպի համաբանությամբ ա ծայնավոր ստանալու հետևանքով՝ անցնելով *տուան, *շուան, *ծիւան, *սիւան միջին ձևերից: Այլ կերպ ասած՝ -իւն/եան հերթագայության առաջացման հարցում Հ. Աճառյանը ենթադրում է իւա>եա հնչյուլափոխություն: Ինչ վերաբերում է հիմն-հիման տիպի բառերի սեռական-տրական հոլովածներում աւն-ի ծագմանը, Հ. Աճառյանը վերջինս առաջացած է համարում հ.-ե. եզ. սեռ. *n-es և եզ. տր. *n-ei նախաձևերից՝ իբրև օրինակ վկայակոչելով սանսկ. եզ. սեռ. vṣnās «արուի» և եզ. տր. rajnē «արքային» հոլովածները: Գ. Ջահուկյանը գտնում է, որ ինչպես գրաբարյան -ուն/ան, -ին/ան, -ին/ուն/ան հերթագայություններում, այնպես էլ -իւն/եան հերթագայության մեջ դրսևորվել են հ.-ե. *n- ծայնորդահանգ հիմքերին բնորոշ հերթագայությունների համապատասխան աստիճանները: Բայց այն հանգամանքը, որ հայերենի համար հ.-ե. համապատասխան հոլովածները վերականգնելիս Գ. Ջահուկյանը նշում է նախաձևային մի քանի տարբերակներ (երբեմն հարցական նշանով հանդերձ), կարծում ենք՝ վկայում է այդ խնդրի դժվարության և ոչ այնքան հստակ լինելու մասին: Այսպես, նա իր «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ գտնում է, որ -ն ծայնորդահանգ բառերի սեռ.-տր.-ի, ինչպես և մյուս թեք հոլովածների վրա ա-ն տարածվել է գործիական հոլովից: Ընդ որում, վերջինիս -ամբ, -ամբք կազմությունների մեջ էլ դրսևորվել է հ.-ե. *en/on/ք հերթագայության ստորին (զրո) աստիճանը՝ *ը-բհի(s): Գալով -իւն-ով վերջացող ծիւն, սիւն և այլն բառերին, նա գտնում է, որ -եա-ով ձևերը պետք է ծագած համարվեն հ.-ե. *o/ə կամ *o/զրո հերթագայության հետևանքով ստացված *iyə mbbhi կամ *iṛbbhi ձևերից (հետագա վերածմամբ եամբ-ի), կամ

էլ թերևս *io* մեծի ձևից: Իր «Հայերենի համեմատական քերականության» մեջ Գ. Ջահուկյանը սեռ.-տր.-ի *առ-ի* առաջացման հարցում նորից ենթադրում է գործիական հոլովի ազդեցությունը, բայց միաժամանակ նշում է նաև *հ.-ե.* (*shva primum*)-ով և *հ.-ե.* (*shva secundum*)-ով **-ən-e/os*, **-ən-e/os* սեռականի և **-ən-ei*, **-ən-ei* տրականի նախաձևեր: Գործիականի *-ամբ* և *-ամբք*-ի համար նա վերականգնում է *հ.-ե.* **-դ-նի*, **əm-նի* նախաձևեր: Չիւն-ծեան-ծեամբ և սիւն-սեան-սեամբ հոլովաձևերի համար էլ, համապատասխանաբար, Գ. Ջահուկյանը տալիս է հետևյալ նախաձևերը՝ ձիւն<*ghii om*, սեռ. ձեան<**ghii ənos* (կամ *ghii ənos?*), գործ. ձեամբ<*ghii րնի* (կամ *ghii əmbhi?*), սիւն <**kii on*, սեռ. *Kii ənos* (-*ənos?*), գործ. *Kii əmbhi* (հարցական նշանները Գ. Ջահուկյանին են—Ս.Ա.)⁶: Այն հանգամանքը, որ հայերենի նախապատմական, ինչպես և պատմական զարգացման ընթացքում զգալի քանակությամբ բառեր այս կամ այն հոլովման են ենթարկվել համաբանությամբ, կասկած չի հարուցում: Այսպես՝ հին հայերենում *հ.-ե.* ռնգային աթեմատիկ հիմքերից ծագած *զառն<հ.-ե.* **vəřēn*-զառին, *զեղն<*velmō*-զեղման և այլն —ն ծայնորդահանգ հիմքերի նման ներքին թեքման են ենթարկվում նաև այնպիսի բառեր, որոնք նախապես պատկանելիս են եղել այլ հիմքերի. հմտ. *հ.-ե.* **bher-no* > բեռն-բեռին, **swidro* > քիրտն-քրտան, **egh* > եզն-եզին և այլն⁷: Այդպես էլ ենթադրվում է, որ ալիւր (ալեւր, աղբիւր) աղբեւր և այլն բառերի ալեւր, աղբեր և այլն ձևերն էլ առաջացել են դուստր-դստեր հոլովման տիպի համաբանությամբ *ե-ներքին* հոլովման ենթարկվելու հետևանքով. ալեւր-**ալեւեր*>ալեւր, աղբեւր-**աղբեւեր*>աղբեր և այլն⁸: Այդ բացատրությունը մեզ համոզիչ է թվում այն պատճառով, որ գրաբարի հետդասական շրջանում էլ տեղի են ունեցել համաբանական այդ կարգի երևույթներ. հմտ. փոքր-փոքեր (փոխ. փոքու), ծաղր-ծաղեր (փոխ. ծաղու) և այլն⁹ և հատկապես գրաբ. բլուր բառը, որ նախապես *ռ-հոլովման* էր պատկանում, իսկ ավելի ուշ շրջանում այն հանդես էր գալիս նաև *ե-ներքին* հոլովմամբ՝ եզ. սեռ. բլեր, գործ.բլեր և այլն¹⁰: Կարծում ենք՝ մասնավորապես բլուր բառի ներքին հոլովման ենթարկվելը վկայում է այն մասին, որ ծայնավոր կամ երկբարբառ+ծայնորդ հիմքերով բառերն էլ կարող էին բաղաձայն+ծայնորդ հիմքերով բառերի համաբանությամբ ներքին թեքման ենթարկվել: Այլ հարց է, թե լեզվական փաստերով հիմնավորվո՞ւմ է *իւա>եա* հնչյունափոխությունը և կարո՞ղ էին ձեան, սեան և այլն ձևերը առաջանալ այդ եղանակով: Սակայն, մեր կարծիքով, լեզվական փաստերը ցույց են տալիս, որ թե հին հայերենում բառափոխության ու բառակազմության ժամանակ, և թե հայերենի նախագրային շրջանում *իւա-ն* տվել է *ուա*, բայց ոչ *եա*. հմտ. մի կողմից՝ գրաբ. հովիւ-**հովիւաց>հովուաց*, պատիւ **պատիւավոր>պատուավոր*, **պատիւական>պատուական*, մյուս կողմից՝ գրաբ. տուար «արջառ» բառի

ծագումը: Այդ բառի համար վերականգնվում է հ.-ե. *dip̄ero նախաձև, որը, հայերենի հնչյունական օրենքներին համապատասխան, տվել է նախ *տիւար, իսկ վերջինս էլ *իւա>ուա* հնչյունափոխությամբ՝ տուար: Ուստի, մեր կարծիքով, հին հայերենի ծեան, սեան և այլն ձևերը չէին կարող առաջանալ **իւա>եա* հնչյունափոխությամբ: Ինչ վերաբերում է հիմն-հիման հոլովման տիպի սեռ.-տր.-ի համար Հ. Աճառյանի նշած հ.-ե. *n-es, *-n-ei նախաձևներին, կարծում ենք, տվյալ դեպքում հ.-ե. *n-ից հայերեն *ան* առաջանալ չէր կարող, որովհետև հ.-ե. *ք>հայերեն *ան* անցումը հայերենի նախագրային շրջանում պետք է տեղի ունեցած լիներ վերջնականների թուլացումից ու անկումից առաջ¹²:

Ըստ այդմ, հ.-ե. սեռ.-տր.-ի վերջավորությունների անկումից հետո *n>ք>*ան* անցում հնարավոր չէր լինի: Գրաբարյան սեռ.-տր.-ի, ինչպես և մյուս թեք հոլովաձևերի *ան*-ի առաջացման հարցում մեզ համոզիչ է թվում գործիական հոլովի ազդեցությունը (ինչպես այդ մեկնաբանված է Գ. Ջահուկյանի կողմից): Իսկ գրաբարյան սեռ.-տր.-ի *ան*-ը հ.-ե. *n-es, *-n-ei հոլովաձևերից առաջացած համարելու դեպքում, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլիներ միմյանց հետ հերթագայվող հ.-ե. *n-es/ք-es, *-n-ei/ք-ei տարբերակներ ենթադրել և հայերենի համար իբրև նախատիպեր դիտել *ք-es, *ք-ei ձևերը: Հանրավոր է, որ այդպիսի *n/ք հերթագայության արդյունքում է առաջացել նաև հ.-ե. ռնգային միջածանցավոր հիմքերից ծագող գրաբ. լք-անե-լ, գտ-անե-լ և այլն բառերի *ան*-ը, այլ կերպ ասած՝ հ.-ե. *linek>likne/likpe>լքանե-լ, *wined>*widne/widpe>գտանե-լ: Այստեղ մենք նկատի ունենք այն հնարավորությունը, որ հ.-ե. ծայնորդները վանկարար արժեքով կարող էին հանդես գալ նաև հաջորդող ծայնավորից առաջ: Կ. Բրուգմանը, մեր կարծիքով, համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հ.-ե. *y/iy, *w/uw հերթագայություններին զուգահեռ նույնպիսի պայմաններում տեղի են ունենում *r/r, *l/l, *m/m, *n/ք հերթագայությունները (Բրուգմանի նշանակմամբ՝ r/r, l/l և այլն)¹³:

Ինչպես վերը տեսանք, գրաբ. սեռ.-տր.-ի *ան*-ի առաջացման հարցում Գ. Ջահուկյանը հնարավոր համարելով գործիականի համաբանական ազդեցությունը, միաժամանակ *ան*-ի համար հ.-ե. *an-e/os, *bn-e/os սեռականի և *an-ei, *bn-ei տրականի նախաձևեր է նշում: Հ.-ե. *an-e/os, *an-ei (shva primum)-ով ձևերը համապատասխանում են հ.-ե. գործիականի համար Գ. Ջահուկյանի նշած *am̄bhi ձևին, ուստի այդ մասին կխոսենք ստորև: Ինչ վերաբերում է (shva secundum)-ով *bn-e/os, *bn-ei ձևին, մեզ ավելի համոզիչ է թվում լեզվաբանության մեջ արտահայտված այն տեսակետը, որ shva secundum-ի գոյությունը անհրաժեշտ չափով չի հաստատվում լեզվական փաստերով (իսկ ենթադրյալ ձևերը ավելի շուտ համաբանության արդյունք են)¹⁴:

Գալով հայերեն գործիականի -եամբ-ի, ինչպես և ամբ-ի համար Գ. Ջահուկյանի կողմից վերականգնված հ.-ե. համապատասխան հոլովածներից, կարծում ենք՝ Գ. Ջահուկյանն այս դեպքում նախաձևային մի քանի տարբերակներ է առաջարկել (երբեմն էլ հարցական նշանով հանդերձ) այն պատճառով, որ կասկածահարույց են թվում ու հատուկ ջնմուքայն կարիք են զգում, մասնավորապես, հետևյալ երկու հարցերը.

1) Կարո՞ղ էին -*iyōn, ինչպես և -*ēn, -*ōn նախաձևերի դեպքում *ō/զրո, *ē/զրո հերթագայություններին զուգահեռ տեղի ունենալ նաև *ō/ə, *ē/ə հերթագայություններ:

2) Հերթագայության զրո աստիճանում պահպանվո՞ւմ էր -*iyōn-ի *y-ը ռնգային ծայրողից առաջ, թե՞ դուրս էր ընկնում:

Ինչպես հայտնի է, հ.-ե. *ō/ə, *ē/ə հերթագայությունները սկզբունքորեն տեղի էին ունենում այն դեպքում, երբ *ō-ն և *ē-ն ոչ թե ներկայացնում էին *ō և *ē ծայնավորների հերթագայության երկար աստիճանները, այլ հանդես էին գալիս որպես հերթագայության լիաժայն աստիճանի ծայնավորներ¹⁴: Սակայն հ.ե. *-n— ծայնորդահանգ բառերի ճնշող մեծամասնության դեպքում *ē-ն և *ō-ն ներկայացնում են *ē և *ō ծայնավորների հերթագայության երկար աստիճանները (այդ հաստատվում է ցեղակից լեզուներում վկայված ինչպես *elē, *ō/ō հերթագայություններով, այնպես էլ ծայնդարծի զրո աստիճանի մնացորդներով. հմտ. լատ. caro «միս», եգ. սեռ. camis, հուն. αργα «զառ, խոյ», եգ. սեռ. αργος, սանսկ. uksā «ցուլ», եգ. սեռ. uksnas և այլն): Հ.-ե. ռնգային հիմքերի *ē-ը և *ō-ը մնացած դեպքերում առաջանում են թեմատիկ հիմքերից -*en և -*on ածանցներով նոր բառեր կազմելիս -*e+en>ēn, *o+on>ōn ձուլման հետևանքով: Բայց այդ եղանակով առաջացած *ē-ը և *ō-ը հերթագայության չեն ենթարկվում¹⁵: Իհարկե, *ē և *ō ծայնավորների երկար աստիճանները ներկայացնող *ē-ը և *ō-ը առանձին դեպքերում կարող էին համաբանության հետևանքով հերթագայվել ə-ի հետ: Բայց զրաբարյան ձեամբ, սեամբ և նման ձևերի առաջացումը բացատրելու համար համաբանական այդ կարգի հերթագայություն ենթադրելու անհրաժեշտություն չկա այն պատճառով, որ *ō/ə հերթագայությունը, և մասնավորապես ə-ը, կարծում ենք՝ տվյալ դեպքում վճռորոշ դեր խաղալ չէր կարող: Եթե *gēiyōn, *kēiyōn և այլն ձևերի հերթագայության զրո աստիճանում *i-ից հետո պահպանվում էր *y-ը, ապա հայերեն ձեամբ, սեամբ և այլն ձևերը, ինչպես ստորև կտեսնենք, կարող էին առաջանալ նաև առանց ə-ի: Իսկ եթե հերթագայության զրո աստիճանում *y-ը դուրս էր ընկնում, այդ դեպքում ə-ն էլ հայերեն ա տալ չէր կարող, որովհետև հ.-ե. *iə տալիս է երկար ī, ինչպես, որ *uə>ū, *gə>g̃ և այլն: ¹⁶ Հ.-ե. *-iyōn-ի հերթագայության զրո աստիճանում *y հնչյունի վերաբերյալ վերոհիշյալ երկնտանքն առաջանում է այն պատճառով, որ *-iyōn-ի *y-ը և, ասենք, *treyes

«երեք»-ի *y-ը գործառութային բուրրովին տարբեր արժեքներ ունեն (ծիշտ ինչպես *u-ի *w-ը և *ew, *ow կապակցությունների *w-ը): Եթե *ew, *ey, *ow, *oy կապակցությունների դեպքում *w-ը և *y-ը բաշխման հարաբերության մեջ են գտնվում երկբարբառի երկրորդ բաղադրիչ *i և *u տարբերակների հետ, ապա *u և *iy հնչյունակապակցությունների դեպքում *w-ը և *y-ը առաջանում են միայն հաջորդող ծայնավորից առաջ որպես *i, *u ծայնավորների և հաջորդող մի այլ ծայնավորի միջև արտասանվող միջանցումային հնչյուններ, որոնք հնչույթաբանական ինքնուրույն արժեք չունեն. հմտ. հ.-ե. *kleu/klu>սանսկ. հն «լսել» արմատից պերֆեկտ մեղիում-պասիվ եզ. I դեմքի ձևը su-sruv-e, բայց եզ. II դեմքի ձևը su-sru-se, կամ հ.-ե. *klei/kli>սանսկ. հն «ուղղվել, ուղղություն վերցնել» արմատից աորիստի հոգ. III դեմքի ձևը a-sriy-an և այլն: Բնականաբար, հարց է առաջանում, թե հերթագայության զրո աստիճանում, երբ անհետանում է *i և *u ծայնավորներին հաջորդող ծայնավոր հնչյունը, *y և *w միջանցումային հնչյունները պահպանվո՞ւմ են, թե՞ իբրև ավելորդ նորից դուրս են ընկնում: Մեր կարծիքով, այդ հարցը և դրա հետ կապված՝ զրաբ. -եամբ(ք)-ի ծագումը կարելի է պարզել՝ հենվելով մի կողմից՝ սանսկ. śva «շուն», հոգ. գործ. śvabhis հոլովածների վրա, որոնք համապատասխանաբար ծագում են հ.-ե. *kwon, *kvṛbhis ձևերից, մյուս կողմից՝ սանսկ. yuvan-«երիտասարդ», հոգ. գործ. yuvabhis ձևերի վրա, որոնք ծագում են հ.-ե. *yuwe/on-, *yuvṛbhis ձևերից: Այս դեպքում, կարծում ենք, սանսկ. yuvan-, yuvabhis, ինչպես և եզ. սեռ. yūnas «երիտասարդի» ձևերի փոխհարաբերությունը հաշվի առնելով՝ կարելի է սահմանել հետևյալ օրինաչափությունը. *հերթագայության զրո աստիճանում հ.-ե. միջանցումային *y և *w հնչյունները պահպանվում են հաջորդող ծայնորդից առաջ, եթե վերջինս կարող է վանկարար արժեք ձեռք բերել*: Մյուս կողմից՝ yūnas-ի ü-ի ծագման վերաբերյալ, կարծում ենք, վերջնական եզրակացության համգելու համար հարկավոր է պարզել.

1. այս դեպքում մենք գործ ունենք երկվանկ set արմատի հետ և ըստ այդմ՝ u<uə-ից (հմտ. սանսկ. śvasṛh «սկեսուր», ընդ որում, ծայնավորից առաջ ծուլում տեղի չի ունենում և ə(շվան) դուրս է ընկնում, ուստի եզ. սեռ. śvasṛuv-ah, նույնպիսի՝ պատճառով էլ yūnas-ի դիմաց yuvan-)

2. թե՞ մենք yuvan-ի դեպքում գործ ունենք միավանկ anit արմատի հետ, և այդ դեպքում yūnas-ի ü-ն ծագում է հերթագայության զրո աստիճանում բաղաձայն ծայնորդից առաջ u-ի և w միջանցումային հնչյունի ծուլումից՝ u+w>ü: Այս հարցը հետագա քննության կարիք է զգում, իսկ տվյալ դեպքում մեզ համար կարևոր է yuvabhis ձևի ծագումը < հ.-ե. *yuvmbhis նախանձից:

3. հ.-ե. *y և *w միջանցումային հնչյունները ցեղակից լեզուների մի մասում ընկել են կամ շատ թույլ են արտասանվում ու որպես այդպիսին չեն

գիտակցվում, իսկ լեզուների մյուս մասում վերոհիշյալ հնչյունները գիտակցվում են որպես այդպիսին, ուստի գրավոր արտահայտություն են ստանում. հմմտ. հ.-ե. *pəiriyoš «հայրական» > հուն. πατριος, լատ. patrius, բայց սանսկ. pitriyas և այլն: Չմայած դրան՝ *y և *w-ի երբեմնի բաղաձայնական ազդեցությունը հաջորդող ծայնորդի վրա զգացվում է նաև այն լեզուներում, ասենք, լատիններենում, որտեղ դրանք չեն գիտակցվում որպես այդպիսին ու գրավոր արտահայտություն չեն ստանում. հմմտ. լիտ. kruvinas, լատ. cruentus «արյունոտված», որոնք ենթադրում են հ.-ե. *kruwətos նախածն: Բացի այդ, լատիններենի վաղ շրջանում վերոհիշյալ հնչյունների բաղաձայնական ազդեցությունը ենթադրվում է նաև շնորհիվ այն բանի, որ հնագույն տեքստերում հանդիպող fuit «եղավ», institui «դրեցի, հաստատեցի», Diana և այլն ձևերում՝ «vocalis ante vocalem corripitur» ձայնավորը ձայնավորից առաջ կարճանում է» (հմմտ. լատ. veni-re «գալ» բայից ներկայի I դեմքի ձևը venio «գալիս եմ» և այլն) լատիններենին բնորոշ հնչյունական օրինաչափությունը չի գործում, թեև այդ ժամանակ արդեն այն ուժի մեջ է եղել:

Գալով գրաբ. -եամբ(ք) ձևին՝ կարծում ենք՝ վերջինս առաջացել է նույնպիսի օրինաչափությամբ, ինչպես սանսկ. yuvabhis-ը: Ինչպես որ հ.-ե. *yuvə/on-ի հերթագայության զրո աստիճանում պահպանվում էր միջանցումային *w հնչյունը, իսկ հաջորդող ռնգայինը վանկարար արժեք էր ձեռք բերում՝ *yuvəbhis>սանսկ. yuvabhis, այդպես էլ հ.-ե. *-iyōn-ի դեպքում (*ghiyōm և այլն) հերթագայության զրո աստիճանում պետք է պահպանվեր միջանցումային *y հնչյունը, իսկ հաջորդող ռնգայինը, համապատասխանաբար, պետք է վանկարար արժեք ձեռք բերեր՝ *-iyəbhi(s) (*ghiyəbhi(s) և այլն): Վերջինս օրինաչափ կերպով պետք է տար գրաբ. -եամբ(ք) (ծեամբ(ք) և այլն)՝ միջձայնավորային դիրքում y-ի անկման (կամ այլ կերպ՝ արտասանության չեզոքացման) և *həw>həw հնչյունափոխության արդյունքում (հմմտ. հ.-ե. *giya/a-na>գրաբ. կեան(ք)-կենաց): Բացի այդ, հաշվի առնելով հ.-ե. *w/uv, *y/iy և այլն հերթագայությունները (հմմտ. հ.-ե. *dwo/duwo «երկու» տարբերակները, որոնցից առաջինը տվել է հուն. δῶα>δω(δεκα) «տասներկու», իսկ երկրորդը՝ հուն. δῶα «երկու»)՝ կարծում ենք, հ.-ե. *-iyōn-ի դեպքում էլ կարելի է ենթադրել *-yōn/iyōn հերթագայության հնարավորությունը: Ընդ որում, *-yōn-ի գործիականն էլ պետք է լիներ *-yəbhi(s) (հմմտ. սանսկ. śvabhis<հ.-ե. *kwəbhis - *kwon «շուն»): Սակայն, *-yōn/yəbhi(s) տարբերակից գրաբ. -իւն/եամբ(ք)-ի առաջացումը քիչ հավանական, եթե նկատի ունենանք, որ հ.-ե. *-y-ը հետբաղաձայնային դիրքում հայերենի նախագրային շրջանում բավական բարդ ճակատագիր է ունեցել ու հաճախ անհետացել է փոխազդեցական հնչյունափոխության արդյունքում¹⁰:

Այսպիսով, մեր կարծիքով, հին հայերենի -իւն հոլովածը ծագում է հ. -ե.

իյծո նախածնից, իսկ գործիականի *-եամբ(ք)* հոլովածնը՝ հ. ե. - *իյրբհի(s)* նախածնից: Ինչ վերաբերում է եզ. սեռ.-տր.-ի, ինչպես և մյուս թեք հոլովածների *-եան-ի* ծագմանը, մեզ համոզիչ է թվում Գ. Ջահուկյանի վերը նշված այն տեսակետը, որ գործիականի ծայնավորումը համաբանությամբ տարածվել է մյուս թեք հոլովածների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան 1957, հ. 3, էջ 410:
2. Նույն տեղում, էջ 430-431:
3. Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 179-180, 175:
4. Գ. Ջահուկյան, Նույն տեղում, էջ 207, 176:
5. Դ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван 1982, ст. 110:
6. Նույն տեղում, էջ 108:
7. Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, էջ 255, 315-316:
8. Գ. Ջահուկյան, նշվ. աշխատ., էջ 172-173, Զ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 416, հ. 6, էջ 229:
9. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, էջ 184:
10. Զ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 1, էջ 455, Գ. Ջահուկյան, նշվ. աշխատ., էջ 173, Ս. Ղազարյան, նշվ. աշխատ., նույն տեղում:
11. Ս. Ավետյան, Զ. Ե. լեզուներում ծայնավորների հերթագայության հին և նոր շերտերի քննության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, 1, էջ 120:
12. K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen Bd I, Strassburg 1897, ss. 399-400, 264-265, 456:
13. Сравнительная грамматика германских языков, М., 1962, т. 2, ст. 239-240:
14. A. Meillet, Introduction a l'etude comparative des langues indoeuropeennes, Paris 1908, p. 132-133, O. Szemerényi, Einführung in die vergleichende Sprachwissenschaft, Darmstadt 1970, ss. 81-82.
15. Տես Դ. Джаукян, Сравнительная грамматика, ст. 110: Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, էջ 163: A. Meillet, նշվ. աշխատ., էջ 231, 266:
16. Տես O. Szemerényi, նշվ. աշխատ., էջ 83-85:
17. И. М. Тронский, Историческая грамматика латинского языка, 1960, ст. 95:
18. Դ. Джаукян, Сравнительная грамматика, ст. 58-62, 71-72:

Новый опыт генетического рассмотрения древнеармянского чередования — iwn/ean

Резюме

Происхождение древнеармянского чередования iwn/ean (jiwn/jean и т.д.) является одним из проблематичных вопросов сравнительной грамматики армянского языка. В статье полагается, что генетическое рассмотрение данного чередования тесно связано с интерпретацией происхождения древнеармянской формы тв. падежа на —eamb(ʿ). Опираясь на соответствующие данные родственных языков, автор делает попытку обосновать возможность существования и-е. праформы *-iyumbhi(s) и возвести форму тв. падежа на —eamb(ʿ) древнеармянских слов на —iwn к данной праформе. Одновременно учитывается возможность аналогического распространения огласовки тв. падежа на другие косвенные падежи, которую выдвигает Г. Джаукян.

S. R. AVETYAN

A New Attempt on Genetic Examination of the Old Armenian Vowel Gradation — iwn/ean

Summary

The origin of the Old Armenian vowel gradation iwn/ean (jiwn/jean etc.) is one of the disputable problems in comparative grammar of the Armenian language. In the article the genetic examination of the above-mentioned vowel gradation is considered to be closely connected with the interpretation of the origin of the Old Armenian instr. case form ending in —eamb(k). Taking as a basis the corresponding facts of cognate languages the author is making an attempt to give reasons for the possibility of the existence of I.-E. archetype *-iyumbhi(s) and to derive the instr. case form ending in —eamb(k) of the Old Armenian words ending in iwn from the above-mentioned archetype. At the same time the possibility of analogical penetration of the vocalism of the instr. case into other oblique cases, which is put forward by G. Jahukian, is taken into consideration.